1/17.3/15067-17
05/18032-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 1624

«28» 12 2017թ. ք.Երևան

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ (ԱՌԱՋԱՑՄԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ) ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԱՐՃ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի ապրիլի 6-ի թիվ 346-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետով և ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 3-ի թիվ 259-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրության 16-րդ կետի 4-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել արտակարգ իրավիճակների առաջացման (առաջացման սպառնալիքի) դեպքում Հայաստանի Հանրապետության բնակչության իրազեկման կարճ հաղորդագրությունների բնագրերի ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

Դ.ՏՈՆՈՅԱՆ